

ԲԱԺԱՆՈՐՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Նույնպիսի համար
Տարեկան 10 ֆր.
Վեցամսեայ 5 »
Մասնատպակա հա-
մար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 ֆր.
Վեցամսեայ 1.25 »
ԳԱՆՏԻԿ ՎՃԱՐՆԼԻ

Մանուցման տղր տարջին
երեսին համար 40 սանթիմ
ե. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիմ է. երեսին
առևի անգամներու համար
20 ԹԹ գեղը կըլլայ:

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՇԱՐՋՈՒՄ

Նախկ և զիստ զրկել
Խմբագրութեան հասցիին

Редакция на вестникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Խմբագրութեան հասցիին

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՍՄԱԼ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Սի շարք մարդիկ տարօրինակ պահանջներ են անում լրագրութիւնից. յամեն մի ընթերցող պահանջում է որ խմբագրները և թերթերը ղեկավարվեն մէն մի ընթերցողի հայեցակէտներով. այնպէս որ եթէ մի որ և է խմբագրի որոշէ բաւականութիւն տալ մէն մի ընթերցողին, այն ժամանակ լրագրի ամեն մի համարը տարբեր ուղղութեամբ պէտք է լըս ընծայվի:

Ընթերցողների ամենատարօրինակ պահանջներից մէկն էլ այն է որ չեն ուղում լրագրական վիճաբանութիւն լինի. այսինքն լրագրիցները չը յարձակվին վատ հոգեւորականի, վատ ուսուցչի, վատ յեղափոխականի, վատ հոգաբարձուի, վատ գրագէտի վրա. կարճ խօսքով բոլորովին անտես առնի մեր հասարակական ազատու երեւոյթները, որովհետեւ այդպիսի յարձակումներ եղած միջոցին՝ յարձակման ենթակայ լինողները պաշտպանվում են և սկսվում է լրագրական վիճաբանութիւնը:

Զարմանալի է ճշմարիտ. լրագրից պահանջում են որ հասարակութեան ներքին կեանքով չլքուվի, պակասութիւնները մատնանիչ չանէ, այլ պառաւական քարոզներ կարգայ և օտար լուրերով կերակրէ հասարակութեան միտքը:

Ճիշդ է. չը պէտք է ուրանալ որ մեր լրագրական վեճերը շատ անգամ լինում են անպատկառ, անսանձ, անվայելուչ լեզուով. բայց չը պէտք է մոռանալ որ այդ տգեղ երեւոյթի պատճառը ոչ թէ սուտը, վատութիւնը և ապիկարութիւնը մտրակող լրագրութիւնը է, այլ յարձակման ենթակայ լինողները և ժողովուրդը: Եւ ուրիշ կերպ էլ չի կարող լինել. քանի որ մեր հասարակական գործերում գեր կատարողները 100-ից 90ը ազէս և գիւնեանային բարոյականութեան տէր մարդիկ են:

Եւ երբ այդ պիտիներին բարոյական մամուլը մի նկատողութիւն է անում, նրանք սկսում են պաշտպանվել իրենց միջավայրին յատուկ փողոցային լեզուով. ահա և վիճաբանութիւնը զլխաւոր հարցը թողած՝ անձնական կռիւի է փոխարկվում. փողոցային տարրը երեւան է գալիս իր բոլոր ազատ միջոցներով մաքառելու իր ստորաբարձ գոյութիւնը քաշքշու համար:

Այո, լրագրական տգեղ և անվայելուչ վիճաբանութիւնը հաճելի չէ. և սրչափ շուտ անհետանայ մեր միջոց, այնքան լաւ:

Գործադրարար առայժմ նա մի անխուսափելի չարիք է. որովհետեւ մեր կեանքը այնքան ազատ է, մեր հասարակական գործերի ղեկավարողները այնքան անընդունակ և պակասաւոր, որ մեր մամուլը, եթէ օգտակար լինելու միտք ունի, ստիպուած է միշտ ձաղկել, մտրակել. իսկ գրա հետեւումը կը լինի միշտ տգեղ վիճաբանութիւնը:

Եւ այդպէս է ոչ միայն մեր մէջ, այլ և այն բոլոր ազգերի մէջ, որոնք չեն ապրել և չեն ապրում չինական մեռելացած կեանքով, այլ ուղում են առաջ գնալ, ուղում են ազատվել իրանց բարոյական օրհասերից:

Լրագրական վիճաբանութիւնը հետեւանք է մեր կենդանութեան, ապրելու և շոկվելու ձգտման:

Այժմ նա տգեղ կերպով է կատարվում, որովհետեւ մեր մէջ վիճաբանութիւնը շուտով անձնականի է վերածվում և Ասիացի ստրկացած հայը՝ իր բոլոր ազատու գէնքերով առպարէզ է լինում մաքառելու. երբ հայը մաքրվի, մտաւորապէս և բարոյապէս կը բարձրանայ, կը փոխվի և վիճաբանութեան ձեւը: Լրագրական վիճաբանութիւնը ոչ միայն վտասակար է, այլ բնդհակառակը յառաջադիմութեան համար անհրաժեշտ մի ազդակ:

ՎԱՐԴ

—)(—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՍՒՈՆ. 10 Հոկտ.

Օրուան նորութիւնը «Ազգային» Հնչակեաններու շուրջը կը դառնայ: «Ազգային» Հնչակեան ըսի ու հարկ է որ նորութիւնը հարցորդից առաջ՝ մի քիչ ծանօթութիւն տամ այդ անուանց նկատմամբ: Երբ Հնչակեանները բաժնուեցան, Արփիարին հետեւողները ուղեցին զիրենք հրոչակել բուն ժառանգորդները հին կուսակցութեան և պահեցին Հնչակեան անունը. սակայն վերջէն հասկացան թէ չը պիտի յաջողին, ուստի «Վերակազմաւոր» բառը տեղափոխին. բայց երբ Վերակազմաւոր թաւով հինցաւ, փոխեցին ու անոր տեղ «Ազգային» բառը դրին և այժմ պաշտօնական անունն է «Ազգային Հնչակեան»: Անպաշտօն անուններ ալ ունին ժողովուրդի կողմէ իրենց տրուած: Ինչպէս են, նոր Հնչակեան, Մարտական, Արփարիներ, հիւր գրուածներ և արարացուականներ: Ասոնք կը հարցորդեմ որ եթէ սխալմամբ պաշտօնական անունէն դուրս ու է մին գործածեմ ընթերցողը չի շփոթի թէ զով կակնարկեմ:

Ինչ որ է նորութեան անցնինք, «Ազգային» Հնչակեաններ լուր մը տարածել սկսած են թէ իրենք հայ հարուստ մը գտած են որ յանձն առած է ծառայել իւրեւ իրենց կուսակցութեան գանձակաւոր որով ամէն հայ առանց տարակուսանքի և երկմտութեան կրնայ: գրամ զրկել «Ազգային» ներու սնտուկը: «Այլ վախ չկայ, կըսեն ասոնք, թէ գրամնիդ ապահովարար իր նպատակին զպիտի ծառայէ»: «Իր նպատակին»... Ինչ ընդարձակ իմաստով բառեր. բայց այդ նպատակը... բուն ինդիքը հոտ կը կայանայ: Եւ մի՞թէ գրամը հայ հարուստի մը զրկելովն ին մեր ուղած նպատակին պիտի ծառայէ: «Ազգային» Հնչակեանները ասով նախ խոստովանած կըլլան թէ մինչեւ հիմայ ապահով մարմին մը չունէին ուր կարելի էր նուիրատուութիւններ

զրկել. ապա իրենց անվաւեր հոչակած կըլլան, որովհետեւ մինչեւ հիմայ այդ պաշտօնը կեդրոնը կը կատարէր. Աւ հոս հարցը կը ծագի թէ՛ հայ հարուստին զրկուած գրամները կեդրոնի կարողորութեամբ չը պիտի գործածուին. ու եթէ կեդրոնը անվստահելի է մեր գրամները հոն փոխադրուին կամ պանքայի մը միջոցաւ ինչ տարբերութիւն կընէ: Եւ «Ազգային» Հնչակեաններ կը կարծեն թէ նորութիւն մը գտած են. այո, ժողովուրդը շրջանող նորութիւն մը որ գեւ չմնած պիտի մեռնի:

Նորութիւն մըն ալ բողոքական պատուելիներու Լուսաւորչական գառնալն է: Պատուելի մը ունէինք հոս իր հային իւր քսելու համար ուղեց վարդապետ ձեռնադրուիլ, բայց որովհետեւ ամուսնացած էր ու վաւակներու տէր՝ իր ջանքերը պարտապաշտին:

Փրովիտէնսի պատուելիին մնացեր էր այդ փառքին տիրանալ: Փրովիտէնսի թեմը Վաղինակ վարդապետի մահուամբ թափուր մնացած է. պատուելի Մարգարէտեան յարմար առիթ սեպեց այդ պատուը կրել: Երեք շաբաթ առաջ մէկէն ի մէկ կը հրաժարի իր պաշտօնէն և Ուսուր կերթայ Լուսաւորչական եկեղեցւոյ արարողութիւններ ստրկելու. ամսոյ 8-ին «մեղայ» ըսաւ և այժմ «ուսուր սարկաւազ» է. կըսուի թէ յառաջիկայ շաբաթ օր «մեղայ առաջի քոյ պիտի ըսէ ու քահանայ ըլլայ, իսկ կիրակի օրը «Երկրիկս» աւելցուելով վարդապետ պիտի օծուի «փոսոս» պատուելին: «Աւր հաց, անդ կաց» ահա Մարգարէտեանի նշանաբանը:

Պատուելիներու թիւը շատ է հոս, այս երկրի մէջ. բուն մը բողոքական հայոց մէկ չորրորդը պատուելի է: Բողոքական դպրոցէն ելլողը հոս եկածին պէս ձրի հաց ուտելու միջոց մը կը փնտռէ և կորոչէ... պատուելի գառնալ: Պ. Մարգարէտեան ալ նոյն ընթացքը բռնեց բայց տեսաւ թէ... հոն հաց չիկայ: Լուսաւորչական հայեր թուով շատ են և վարդա-

պետներու թիւը քիչ, մանաւանդ թէ՛ վարդապետութիւն իշխանութիւն կը նշանակէ, հաց ալ կայ: Ահա աս է մէկ նպատակը, իսկ միւսը լիովին բացատրած կը ըլլամ երբ ըսեմ թէ պատուելին «Ազգային» Հնչակեան է և ուստի պէտք էր ազգային եկեղեցւոյն պատկանէր. ասով թէ եպիսկոպոսը և թէ քանի մը մոլեռանդ կրօնամիտներ կը շահի . . .

Եթէ Մարգակէտեան անկեղծօրէն դաւանափոխ եղաւ «կառաջարկենք որ հրապարակաւ բացատրէ «փռօտութեան» սխալները:

Ո՛ր բարքեր . . .

Լէ՛Օ

ՍՕՅԻՍ, 15 Հոկտ.

Փէրտինանտ իշխանը որ 2—3 ամիս քաղաքական էր քաղաքական է թիւթէթի պահանջած փոխադարձ այցելութիւնները սալու եւրօպական արքունիքներուն, վերագարձած է մայրաքաղաքս. Սոսրանիէի աշխան առօրեայ նիստերն հանդիսաւոր կերպով բանալու:

Պուլկարիոյ ներկայ կայութենէն վերագատելով սովորականէն աւելի փոթորակալի կերեւնան տեղի ունենալիք հարցասյնդունները: Պ. Ռատուլաօֆ դեռ իր ձեռքը չառած կառավարութեան զեկը շատ մը ծրագրերն են, ֆինանսական խնայողութիւններ ու սուրքերու բարձում խոստացաւ, բայց այժմ ասոնք ահագին խոչնդոտներու պիտի ենթարկուին: Անցեալ մայիսի նշանաւոր ազմկալի սրտակարգ նիստերուն մէջ, հակակառավարականներն ընկճուեցան, որովհետեւ քիչնոր էին, և կառավարութիւնը կրցաւ ընդունել տալ նոր փոխառութիւնը: Հակակառավարականներու բանալին հետ միացած են նաեւ Սթամ-

պուլիստները չը կրնալով մի համաձայնութեան գալ Պ. Ռատուլաօֆի հետ, և եղած ու նմանը չը տեսնուած արիւնսլի ընարութիւններու պատասխանատուութիւնը իրենցմէ նետելով, դարձան մի ստուար ու զօրեղ ընդդիմադիր ուժ մը: Սոսրանիէի մէջ, կառավարութեան ամէն մի ձեռնարկը սապալելու, կարի կնճռու ու հանգուցաւոր հարցերուն լուծելու Պ. Ռատուլաօֆի կառավարութիւնը:

Որ սուր Պուլկարիոյ տնտեսական ազդերն իր կը ցամբին, երկրի աննպաստ արքանդը իր հիւժը կը նուազեցնէ. Պուլկարիոյ ճակատագրին մթազնուղ փոխառութիւնը մասամբ մը բաւարարութիւն պիտի տար այդ անհատում պէտքերին և պայմանագրի Լէտերու համաձայն պահանջները այս հոկտեմբեր 15ին 55,000,000 ֆրանք պարտուոր էին վճարել: Բայց Թրանսիլի պատերազմը և Եւրոպիոյ դրամական հրապարակի անկայուն ու տագնապալի վիճակը սուրբ բռններով դժուարութիւններ կը յարուցանեն. և նոր պայմաններ կառաջարկեն:

1. Պուլկար պետական դրամատունը արցիտաներէ կազմուի:
2. Ամբողջ ֆինանսիան քօնթրօլի ենթարկել:
3. Աէժիւն հաստատել:

Այս երեք կէտերը մերժուել են պուլկար կառավարութեան: Բայց շատ անելու խեղդիչ վիճակի մէջ է երկիրը: Պետութեան ամբողջ հարստութիւնը 1,000,000 ֆրանք բոլոր գանձարաններուն մէջ, և 8,000,000 ֆրանք ալ պետական պանքայի անձեռնմխելի ֆօնտը, երեք ամսական բոլոր կառավարական պաշտօնեաներուն չէ վճարուած: Լուր կայ որ եթէ Պ. Իվանչօֆը չը

կրնայ մի յաջող ու նպաստաւոր պայմաններով կապել փոխառութիւնը՝ Ռատուլաօֆիստները քաշուին: Սթամպուլիօֆիստները Սթօրիօֆի հետ պաշտօնի գալու մեծ յոյս կայ: Վերջին լրացուցիչ ընարութիւններու ժամանակ Սթամպուլիօֆիստներու բաւական հռչակ ունեցող «Հայաջէվը» Թրնօվայէն երեսփոխան կրցաւ ընարուիլ:

Մտերու Պօլսէն բնիկ Ուերիացի արաբ մը, Սօֆիա գալով ձեռնարկեց «Լալահ» անունով թերթ մը հրատարակել: Իբրեւ, Սուլթանէն «Հալաճուած» և իբրեւ «Երիտասարդ-Թիւրք» մի քանի հայեր գլխաւորապէս թեմամբ շրջապատեցին զինքը և գլխորութիւններ ցուցուցին իրեն: Յարութիւն Ձիւմրիտեան անուն հայ մը որ Պօլսի փաստաբանութիւնը ըրած էր և 3—4 ասորի է ի վեր Սօֆիա համեստօրէն կապրէր. յանձն կառնէ թերթին աշխատակցիլ: Առաջին թիւը լոյս տեսնալուն պէս Ձիւմրիտեանը և ուրիշ երկու թուրքեր ոստիկանութեան կը կանչուին և անմիջապէս հոն կը բանտարկուին: Շատ ուշ կիմանանք որ ոստիկանապետը նախարարական որոշման հիման վրայ Ձիւմրիտեանը և թուրքերը պիտի արտաքսէ եղբի իբրեւ անգործ թափառաշրջիկներ և զնասկար մարդեր. տեղոյս հայ հասարակութիւնը իրագէկ ըլլալով թիւրք հրապարտսին մասնակցութեանը այս գործին մէջ և անոր զրպարտութիւնը երեսն հանելու համար, ամէն զոհողութիւն թափեց. դիմումներ եղան կառավարութեան թէ պաշտօնապէս, և թէ կողմնակի անձնաւորութիւններէ՝ խնդրելով այդ ապօրինի ու երկրի սահմա-

նագրական հիւրեկալ օրէնքին դէմ կարգադրութիւնը փոխուի, ապացուցանելով ու երաշխաւորելով Ձիւմրիտեանի պարկեշտ վարքը: Կառավարութիւնը կերպով մը ուշադրութիւն տուաւ խնդրին և խոստացաւ գոհացում տալ:

Ձիւմրիտեանը Ալէքէն վար կառուուի և հոն ազատ կը ձգուի գուցէ մի քանի օրէ Սօֆիա իսկ վերագառնայ. իր դրած մի նամակէն յայտնի կերեւայ որ իր ուղեկից թուրքերը կը խոստովանին իրենց լրտես ըլլալնին, ինչպէս նաեւ այդ արարքին մասնակցութիւնը: Այնպէս որ մի աղքեցիկ ու արժանահաս անձէ առած տեղեկութիւններու համեմատ, թերթը լրտեսական թակարթ մըն է, մարդ որսալու և աւելի մօտէն հսկելու Մակեդոնական գործերուն: Մակեդոնական գործերուն մասին թերթը ի վեր Սօֆիան թիւրք լրտեսներու սրջ եղած է. ասոնք ամէն զիմակի տակ սնդուներ պէս կը վխտան: Բայց ուրախալի է որ աջալուրջ ոստիկանութիւնը այդ անկոչ ու դաւաճան հիւրերէ ազատած է քաղաքացիները, ինչպէս անցեալ օրը այդ «Հալաճուած» կարծեցեալ արարքի մի քանի ընկերները գործս վնասուեցան և ինքը արաբը ոստիկանական քննութեան ենթարկուել է: Հին մակ կառավարութեան աչքին մերկացուեցաւ «Մէլհօմէտի» և «Լալահի» խմբագրի Ահմէտ պէյի մեքենայութիւնները:

Առանց երկար բացատրութիւններու մէջ մանալու կը խնդրենք Պ. Իսթէնաէրէն որ անյայտալ մեղ տեղեկացնէ թէ ինչ ըրաւ Հայաստանի ոստիկանական ստանդարտ հանգանակած գումարը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՍԱԿԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Վաղինակ վարդապետի մահուամբ հայ յեղափոխութիւնը կորսընցուց իր անձնուէր զինուորներէն մին. ասպարեզէն պակասեցաւ անկեղծ և մաքուր գործիչ մը. և վերջապէս հայ ժողովրդի քաջ հովիւներէն մին մնաւ: Որովհետեւ Վաղինակ վրդ մեր սակաւաթիւ պարտաճանաչ և իրենց կոչման արժանի կղերականներէն էր:

Տառը տարի առաջ զիրար ճանչած և ընկերացած էինք: Քանի մը անգամներ մեր ժողովներու մէջ երեւաց և նախագահած էր: Ինք սկիզբէն մինչեւ վերջ կուսակցական մարդ չէր և չէրաւ. միշտ յեղափոխականներու ի մի ձուլման և միանալուն համակիր և փափաքող էր. վերջապէս ուր որ գործ և շարժում

կար, ինք հոն էր, նոցա ընկեր և մասնակից:

Սպարապետութեան դուռը բանտարկուած միջոցիս ժամացոյցիս ետեւի կափարին տակ երկտող մը զետեղելով ընկերներուս զրկած էի իմացնելու թէ, մահուան դատապարտուելուս պատճառը. Աչրգեան Ուրէնի. Տաճառ վրդի Սուքիաս քահանայի և լուսարար Յովհաննէսի դաւաճանութիւններն և վկայութիւնները եղած էին:

Վաղինակ վարդապետ ինքնարեւոքար Աչրգեանի տեղորն ըլլալ սիրով կատանձնէ. իբր կղերական միշտ Աչրգեանի հետ տեսնուելուն պատճառաւ ամենէն յարմար ինքզինք դատելով: Տնօրական գործողութեան երկու օր մնացած Աչրգեան զինք ազգային հիւանդանոց կը զրկէ, քանի մը օր հսկողութեան ներքեւ պահելէն վերջ իբր աքսոր ի վրայ կողմերը կը զրկէ, որով Վաղինակ վարդապետի Աչրգեանը սատկեցնելու ծրագրին անիրականալի կը մնայ:

Ամէն վտանգ աչք առնելով քանի մը անգամներ իր ընկերական և

միութարական նամակներ մեզ հասցուցած էր Աքեայի բանտը գտնուած միջոցնիս:

Իրարմէ բաժնուելնէս եօթը տարի վերջ՝ Լօնտօնի մէջ զիրար գտանք. Ամերիկա կերթար իբր հովիւ Փրօվիտէնսի թէմին. նպատակն էր շուտ վերագառնալ, զէպի երկիր՝ և զէպի գործին վայրը . . .

Նպատակս իբն կենսագրութիւնը ընել չէ. և ոչ ալ իրեն քաղաքի կարեւոր նամակներէն քաղուած քնքեր ընել, որովհետեւ շատ պիտի երկարի գրածս:

Վաղինակ վարդապետ քանի մը ծրագրերն ունէր. դժբաղդարար իր ծրագրերն էին և ոչ մէկը կրցաւ իրականացնել. պատճառը, նախ ըսեմ որ ծրագրերն գործադրելու միջոցին իր մեռնիքն անակաթիւն չուէր իրեն համար, որովհետեւ միշտ ժողովուրդի շահերը և իր ձեռնարկի օգուտները աչքի առաջ ունէր՝ նեթականն էր որ կը պակսէր իրեն և իրեններուն. այս մասին նամակիս միտոյս պատասխանելով կըսէր.

«Շատ ճիշդ է ըսածներդ և գրածներդ, ինչպէս կըսես. մարդ բառը

եթէ ձախէն կարգաւոր պէտք է դրամ կարդանք. ուրիշ մարդը առանց դրամի ոչինչ չէ կարող ընել, և դրամը՝ առանց մարդու գործածութեան ոչինչ կալի. կամ օգուտ մը չունի»:

Վաղինակ վարդապետ մինչեւ վերջ իր սկզբունքին դէմ չը մեղադրէր, ինքը միշտ կըսէր.

«Հարուստէն և ունեւորէն առնենելու է, գործին և կարօտեալներուն տալու է:

Միջոցեւ վերջ իր բաժնի պէս ըրաւ և ըրածին տալացոյցներն աչքի առաջ ունինք արդէն: Ամերիկայի պէս տեղ մը հովիւ մը ըլլալով հանդերձ մեռնելու ժամանակ կուտ մը չունենալէն ի գտմ. 180 տօլար տալիքի ներքեւ մնաւ:

Ինչպէս ամէն մեզդ ինք սխալուեմի, Վաղինակ վարդապետն ալ իբր մարդ կարելի է իր սիրտներով ունենար, բայց կարգ մը շահախորդ իրերն և կուսակցականներ պատիարակեցին և քննադատեցին իր արդարացի ընթացքը. գիտէք ինչո՞ւ, որովհետեւ Վաղինակն և իր նմանները ազգին Պ. հայրենեաց

իր պաշտօնին վերաբերել կարգ մը գծուարութիւններէ նեղուած քաջուած է վարագ :

— Նպատակը յանձնաժողովը որոշած է 250 ոսկի զրկել վան . 100 Քաղէշ և 30 ոսկի ալ երզընկայի կարօտելոց :

— Նպատակը յանձնաժողովը տեսնելով որ ձեռնուր քանի կը մտնենայ գաւառներու մէջ կարօտութեան ատիճանը այնքան կը բարձրանայ և իր սնուողը դատարկ է , դիմած է խառն ժողովին , ուր որոշուած է զիմել կառավարութեան յանուն կարօտելոց նպաստ խնդրելու :

— Հռչակաւոր ծովանկար Յովհաննէս Այվազովոքի մատգիր է իր նկարներու մշտական ցուցահանդէսը բանալ Եալգայի մէջ :

— Կովկասի Ալէքսանդրապոլ քաղաքէն համեստ արհեստաւոր մը (տիքիճի) մեռնելով իր խնայողութեամբ ձեռք բերած դամաբէն իր ազգականներուն պէտք եղած բաժինը հանելէն ետքը , 200 ռուպլի նուիրեր է տեղւոյն եկեղեցիին , 50 ռուպլի բարեգործական ընկերութեան , 50 ռուպլի երուսաղէսի և 50 ռուպլի ալ Դէորգեան ճեմախնին :

Թող հարուստները ամչնան :

— Պոլսոյ Ազգային հիւանդանոցին ինպատու բացուած հանգանակութիւնը այս տարուան համար , մինչեւ հիմա հասած է 23880 զրուշի :

Ա Ջ Դ

Խորհուրդս իր 10 Հոկտեմբեր 1899 նստի մէջ որոշեց սեղանական ազգային լրագիրներու միջոցաւ ազգարարել թէ , սակէ վերջը հոգեւորական մը , առանց պաշտօն մը ունենալու . եւ կամ առանց խորհրդոյս հրաւերի , եթէ քաղաքս գայ , իր ծախքերուն համար ինք (խորհուրդս) պատասխանատուութիւն չպիտի ստանձնէ , ուստի խնդրեմք լրագրից միջոցաւ հրատարակել ներկայս :

Ի գիմաց Թաղ. Խորհրդոյ Ասեմազպիր Ատենապետ Ա. Կուզազեան Գ. Թաւիտեան Յիւլիպէ , 13 Հոկտեմբեր

ՖԻՍԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅՐՈՒ ՄԱՍԻՆ

Արդէն մեր ընթերցողներին հաղորդեցինք թէ Ֆրանսական ամէն ուղղութեան պատկանող լրագիրներն զբաղվում են հայերի վիճակով : Այս անգամ մեր ձեռքի սակ ունինք ֆրանսական երկու գաւառական թերթեր որոնց մէջ կան երկու յոգուածներ հայերի մասին . մէկը Օգիւստ Իէնարինը «Լը կամէսիկուա» թերթի մէջ . միւսը «Լէնտիկաթօր Ամիէնուա» Վիգլթօր Պիօլրէլինը : Տեղի սակաւութեան պատճառով մենք չենք կարող այդ ամբողջ յոգուածները սպագրել , այլ միայն քաղաքներ կաննենք :

Օգիւստ Իէնարի յոգուածը կրում է «Քարենորոգումները Հայաստանի մէջ» վերնագիրը — եւ սկսում է այսպէս — «Հայաստանի բարեկամ մամուլի միջոց հասաւտուն մարտը և մի քանի օտար հիւպատոսները բողոքները Սուլթանի բարբարոսութիւնների դէմ» արդեօք պիտի ունենան իրենց արդիւնքը : Արդեօք այդ աւազակին ծածկող նախատինքը պիտի բանան ՚ . կ . Վ . ! աչքերը Առաջին հայեացքով կը կարծուի հաւատալ կարգաւոր Պոլսոց հասած հոկտ. 11ի հետեւեալ հեռագիրը

Այստեղ Պ. Իէնար մէջ է բերում Սուլթանի իրաւէն որ մեզ արդէն ծանօթ է և շարունակում է այսպէս .

«Նախ մեծ ուրախութեամբ արձանագրում ենք այս պաշտօնական հեռագիրը , բոլորովին վերապահութեամբ և զգուշութեամբ վերաբերվելով դէպի Ապտիւլ Համիտի այս յայտարարութիւնը , որովհետեւ այս վեհապետը զիրութեամբ մի ձեռքով բարենորոգում կը մտցնէ և միեւնոյն ժամանակ միւս ձեռքով կը մարթէ իր հպատակներին» :

Յետոյ բոլորովին թերահաւատութեամբ վերաբերվելով դէպի Սուլթանի մեղ տւած շնորհները , յոգուածը վերջացնում է այսպէս .

«Ինչ էլ որ լինին այն բարենորոգումները որոնք զեպաննեղը պիտի ձեռք բերեն մամուլի աջակցութեամբ Սուլթանին ճշնշելով , մենք կարծում ենք որ Հայաստանը իր հանգստութիւնը չի գտնի , որից նա այնքան երկար զրկված է , մինչեւ որ մի քրիստոնէայ կառավարիչ չունենայ , որի ստորագրութեամբ պաշտօնաները հայերից պիտի լինին : Միայն այս միջոցով ու այս ճանապարհով հայը կը փրկվի ու կազատվի» :

Վիգլթօր Պիօլրէլի յոգուածը վերնագիրն է «Ֆրանսիան և Հայաստան» . այս յոգուածը գրված է շատ զգուշուն կերպով , կարծես թէ զրոյը հայ ազգասէր լինի :

Նախ խօսելով ֆրանսիական ազգի ազատարար պատմական ոգու մասին , յետոյ մատնանիչ անելով այն փաստը որ մուսուլմանները միայն հայերին չէ որ ստում են , այլեւ բոլոր քրիստոնէաներին և եթէ հնարունենան ամբողջ աշխարհը կը ճնշեն մահմետի գրոշակի տակ , համակրական խօսքեր է ուղղում դէպի հայերը , դէպի մեր անցեալը , յուզվում մեր անտանելի վիճակից , և իր յոգուածը վերջացնում է այս խօսքերով .

«Թերեւս այս սողերը կարգան շատ սրտի տէր մարդիկ թերեւս այս կոչը կը լսեն մտաւորապէս շատ լեծեղ մարդիկ և իրենց կողմից կը քարոզեն յոգուած «չարիքները ուղղելու գործին . և շուտով կը բարձրանայ ազգակ , բարբարոսութիւնների դէմ . ըմբոստութիւն ներկայ անգործութեան դէմ և Ֆրանսիայի սիրտ կուռչի եղբայրութեան և արգարութեան վսեմ յոյսով ու կը դառնայ դէպի Հայաստան և կասէ» :

«Քոյր իմ , ես այստեղ եմ . . . ցամաքացրու արցունքներդ , քո զգրագրութիւնները վերջանում են» :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ ծովային եռուն գործունէութիւնը նոյնիսկ անգլիացիները կը զարմացնէ . Բլիմութէն անգլիական թերթի մը եկած հեռագիրը կը հաղորդէ թէ ծովային նախարարութիւնը կը զբաղուի պահեստի նաւատորմի մէկ մասը պատերազմական վիճակի մէջ դնելու . ոչ թէ Թրանսվալի դէպքերուն վատճառաւ , այլ Պարսկական ծոցի մէջ ենթադրելի դժուարութիւններու համար :

Լրագիրները կըսեն թէ հրաման արձակված է որ այն բոլոր զբաղակներն իր , որոնք մասնակցած են վերջին նաւային ռազմական փորձերուն , պատրաստ ըլլան առաջին նշանը ստանալուն պէս ծովը մտնալ :

— Հռչակագրո Շարիր փաշան , որ Հայաստանի վրա Սուլթանի կողմէ քոմիսէր նշանակուած էր և ուր որ գնաց կոտորածներու հրաման տուաւ , Սուլթանի բարբարոսական ծրագիրը իրագործելը մեքեր է :

— Քարի կառավարութիւնը Հարաւային Աֆրիկէի հասարակապետութեան ազգային պանքային վերադարձուցած է այն 150,000 ստէրլին , որ գրուած էր . որովհետեւ այդ գումարը մասնաւոր անհատի կը պատկանի եղբր , բայց ոչ հասարակապետութեան :

— Քիմպէլլէի մէջ զնգապետ Գէգէվիչ , անգլիացի զնգերու հրամանատարը , յայտարարած է թէ այն բոլոր անգլիացիները , որոնք կողոններ Պօէրներուն , իբր ապստամբներ պիտի նկատուին և պիտի պատժուին առանց երկար բարակ գատաստանի :

— Շտայնի գաղտնի շրջաբերականը կը պտտի թրանսվալի պաշտօններու մէջ , որով կերեւայ թէ անգլիական իշխանութիւնները միտքերը կը պատրաստեն լսել տալու համար որ Պաշտօնները պիտի մասնակցին Անգլո-Պոյէրեան պատերազմին : Անգլիոյ Մազիթի ներկայացուցիչը ճամբայ պիտի ելլայ պաշտօններու գլխաւորներու հետ խորհրդակցելու : Այսպիսի պարագաներու մէջ 200,000 պաշտօններու աջակցութիւնը Անգլիոյ հաճելի պիտի ըլլայ :

— Անգլիոյ զինարաններու մէջ թագաւորոզ գործունէութիւնը , նաւատորմիցը պատերազմական վիճակի մէջ դնելու պատրաստութիւնները կը յուզեն ամբողջ աշխարհը : Ամէն ոք Անգլիոյ մէջ կը հարցնէ թէ ինչո՞ւ և որո՞ւ դէմ կը պատրաստուի Անգլիան . որու համար նաւատորմիցը ձիպրալթար կերթայ : Այս ոք կրնայ պատասխան տալ . պաշտօնական թերթերը Սիինքսի լուսթիւն կը պահեն . ժողովուրդը և մամուլի մէկ մասը զանազան բացատրութիւններ կուտան .

Ըստ ոմանց այս պատրաստութիւնները Ռուսիոյ դէմ են , որ կուզէ Պարսկաստանը տիրապետելու ոմանց ալ Ֆրանսայի , որ կուզէ ամբողջ Մարօքոյին տիրանալ :

Անգլիացիները ամբողջովին յուզեալ վիճակի մէջ են :

— Քարէն 13 հոկտեմբերին կը հեռագրեն թէ մէնբալ Իւլ իր զօրքերով կրցէր է միանալ մէնբալ Ռիդին հետ կէս օրէ վերջ ի Լատիս միթ . այսպէսով 12000 աւելի անգլիական ուժեր միացեր են և բաւական զօրեղ բանակ մը կազմեր :

ԹԻՒՏՐՈՆ «ԱՆՎԷԼ ՍԼՍՎՈՅ»

Կը ծանուցուի արգոյ հասարակութեան որ ՎԵՍԵԼՍ խումբը որոշած է ներկայացնել ամէն շաբթու կական ներկայացումներ . սա պայմանաւ որ երեքշաբթի , հինգշաբթի , շաբթու կիրակի իրեկունները ստորագրեալ գիներով , այնպէս որ սրահին մէջ չի պիտի գտնուին նշանակուած տեղեր այլ պիտի լինին միայն սեղաններ եւ սթոններ գրուած :

Գիները . — Կանանց համար 50 սանթիմ , էրիկ մարդոց համար 1 Ֆր . յոսնկայս նստարաններով 50 սանթիմ :

ՊՕՐՍԱ

Table with exchange rates for various currencies and goods. Columns include 'Վաւոն', 'Լիպրա', 'Ֆրանք', 'ՊՈՒՂՏԱՅ', 'ՄՈՍԻՐ', 'ԱՐՔԱ', 'ԵՌԻԼԱՅ', 'ՖԱՍՈՒԼԵԱ', 'ՏԱՐԸ', 'Առապա', 'Լիպրա', 'Ֆրանք', 'ՊՈՒՂՏԱՅ', 'ԱՐՔԱ', 'ԵՌԻԼԱՅ', 'ՖԱՍՈՒԼԵԱ', 'ՄՈՍԻՐ', 'ՏԱՐԸ', 'Հէր կիւն կէլն մալ', 'ՊՈՒՂՏԱՅ', 'ԱՐՔԱ', 'ԵՌԻԼԱՅ', 'ՖԱՍՈՒԼԵԱ', 'ՄՈՍԻՐ', 'ՏԱՐԸ', 'Առապա մուամէլէսի նարոյէոն 21.20 Ֆրանք հիսապը Էլէ սիր .', 'Печатня „Важность“ Варна'